ՀԱՅՈՑ ԴԷՄ ՈՃԻՐՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ԱՆՊԱՏԻԺ

Ճիշտ երեք տարի առաջ, 1988 փետրվարի 26-28-ը, Սումգայիթում հայոց դէմ գործուած ցեղասպանական արարքն առանձնանում է իր յաջորդներից՝ Խոջալուից, Աղդամից, Կիրովաբադից եւ Բաքուից: Այն շրջադարձային նշանակութիւն ունեցաւ, բացասական իմաստով անշուշտ, հայ ժողովրդի համար, որին թւում էր, թէ 19-րդ դարից մինչեւ 20-րդ դարի 20-ական թուականները իր ապրած ցեղասպանութիւնների շարքը Թուրքիայում, Կիլիկիայում եւ բուն Հայաստանում, ինչպէս նաեւ 1937-49-ի զանգուածային հալածանքները Խ. Հայաստանում, պատկանում են անցեալին, թէ մարդկութիւնն արդէն մտել է քաղաքակիրթ յարաբերութիւնների փուլը, թէ, պէտք է խոստովանեմ, Խ. Միութիւնում ինչ էլ որ պատահի, չի՞թոյլատրուի հայ ժողովրդի եւ ընդհանրապէս ժողովուրդների դէմ ֆիզիկական որեւէ հաշուեյարդար:

Ահա թէ ինչու Սումգայիթը տրավմատիկ ազդեցութիւն թողեց մեր ժողովրդի բոլո՛ր հատուածների վրայ, ներսում թէ դրսում:

Սակայն Սումգայիթը մեր ժողովրդին դրեց մի աւելի կարեւոր ճշմարտութեա՛ն առաջ. թէ հայ ժողովրդի դէմ գործադրուած ոճիրներն անպատիժ են մնում: Որեւէ ժողովրդի համար ամենադժբախտ, բարոյալքի՛չ նշանակութիւն ունի անպաշտպանուածութեան, անապահովութեան, հալածուածութեան զգացումը: Այն տեղիք է տալիս ազգային տարբեր բարդոյթների, որոնք վտանգաւոր են ազգի ներքին առողջութեան՝ տեսակէտից: Այն մեր ազգի ներսում առաջացրել է ոմանց մօտ՝ այլասերումի, ուրիշների մօտ՝ ոչնչապաշտութեան կամ նիհիլիզմի, այլոց մօտ՝ սոմազոխիզմի կամ անընդհատ սեփական ցաւով զբաղուելու սովորամոլութեան, իսկ ոմանց մօտ՝ յուսահատութեան եւ դրանից բխող վրէժխնդրական արարքների հանդէպ հակումներ: Միւս կողմից, այն պատճառ է դարձել, որ մեր ազգի մեծամասնութեան մօտ առաջանայ միջազգային արդարութեան եւ իրաւունքի հանդեպ չպատճառաբանուած, աւելորդ վստահութիւն:

Ահա՛ թէ ինչով է բացատրւում այսպէս կոչուած երրորդ ուժի, այս դէպքում աւելի ճիշտ կը լինէր ասել՝ երկրորդ ուժի կամ ընդհանրապէս օտար ուժերի հանդէպ պատրանքների գոյութիւնը մեզ մօտ: Մինչդեռ այն միակ ուժը, որը պէտք է ստեղծել, որը պէտք է ամրապնդել՝ մեր սեփական ուժն է: Իսկ սեփական ուժի ամէնից կատարեալ ու բարձրագոյն արտայայտութիւնը սեփական պետութիւնն է, ազգայի՛ն պետականութիւնը:

Վրէժխնդիր, հերոսական արարքներ շատ են գործուել մեր ժողովրդի զաւակների կողմից՝ սկսած հայ ազատագրական պայքարի օրերից մինչեւ Մեծ Եղեռնին յաջորդած տարիները, ու տակաւին մինչեւ վերջերս: Սակայն այդ բոլորը դատապարտուած են եղել մնալու մասնակի եւ ի վերջոյ ապարդիւն, այնքան ժամանակ, որ դրանք չեն եղել արտայայտութիւնը մեր ազգային պետականութեան: Իսկ այժմ մենք ստեղծում ենք այն, այդ պետականութիւնը, որ կը դառնայ՝ մեր ժողովրդի ապահովութեան միակ երաշխիքը եւ մեր ազգային առողջութեան, ներքին հաւասարակշռութեան վերականգնողը:

Միայն ազգային ուժեղ պետականութիւն ունենալու դէպքում է որ հայոց դէմ գործուած ոճիրներն այլեւս չեն մնայ անպատիժ, ու չեն լինի նոր սումգայիթներ: